ՎԻԶԱ ԿԵՆՏՐՈՆ «ԹԻԷԼԷՍԿոնտակտ»

TLSCONTACT – ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑՈՒՑԱԿ

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ (90 ՕՐԻՑ ՔԻՉ)

Ցանկանում եք մեկնել Իտալիա՝ այցելության, և այն չի գերազանցի 90 օրը:

Բոլոր փաստաթղթերը պետք է լինեն իտալերեն կամ անգլերեն թարգմանված (անձնագիրը ենթակա չէ թարգմանության):

Բոլոր փաստաթղթերը (հատկապես անձնագրի պատճենները) անհրաժեշտ է ներկայացնել A4 ձևաչափով:

ՀԻՄՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

☐ Շենգենյան հարցաթերթը՝

Պատշաճ կերպով լրացված (իտալերեն կամ անգլերեն), ամսաթվի նշումով և անձամբ ստորագրված հայտատուի կողմից: Վիզայի հարցաթերթը հասանելի է Վիզայի մասին տեղեկատվություն – Հղումներ և ներբեռնումներ էջում:
Անչափահասների դեպքում (18 տարեկանից ցածր), հարցաթերը պետք է ստորագրվի ծնողների կամ իրավաբանական խնամակալություն իրականացնող անձի կողմից:

☐ Անձնագիր

Անձնագրի պատճենը – բոլոր նշումով էջերը և գլխավոր էջի ևս մեկ օրինակ անձնագրի վերադարձի համար

☐ Երկու լուսանկար

երկու լուսանկար (3.5 սմ x 4.5սմ)

☐ Ճանապարհորդական ապահովագրություն

Աջակցության ապահովագրության վկայագիր, որը պետք էլ վավեր լինի ճամփորդության ողջ ընթացքում:

☐ Օդանավի տոմսի ամրագրում

☐ Կացության վայրի մասին ապացույց, օրինակ՝ հյուրանոցի ամրագրում՝ **արժեքի վերաբերյալ տեղեկատվությամբ:**

☐ Հայաստանի Հանրապետությունում հայտատուի ունեցած տնտեսական ու սոցիալական կապերի, ինչպես նաև ծրագրված այցի ողջ տևողության համար բավարար ապրուստի միջոցների ապացույց Յուրաքանչյուր դիմումատուից պահանջվում է ներկայացնել իր քաղաքացիական կարգավիճակին համապատասխան փաստաթղթեր

- ☐ Գործատուի տեղեկանք՝ աշխատավարձի մասին նշումով (առավելագույնը մեկ ամիս վաղեմության);
- ☐ **Պետռեգիստրի վկայականի պատճենը:**

☐ **Անհատ ձեռներեցություն՝ հայտատուի ընկերության Պետռեգիստրի գրանցումը (բնօրինակը և պատճենը);** տեղեկանք՝ աշխատավարձի մասին նշումով (առավելագույնը մեկ ամիս վաղեմության);

☐ Վերջին երեք ամիսների բանկային քաղվածք: Դա պարտադիր փաստաթուղթ է:

Եթե դիմումատուն չի կարող տրամադրել այն, ապա պետք է ներկայացնի այլ փաստաթղթեր, որոնք կապացուցեն նախատեսված ժամանակահատվածում Շենգենյան տարածքում գտնվելու համար համապատասխան միջոցների առկայությունը:
(Հայերեն տարբերակը չի ընդունվում. փաստաթուղթը պետք է լինի կամ անգլերենով կամ թարգմանված):

☐ Սեփականության վկայականներ (մեքենա, բնակարան կամ այլ անշարժ գույք);

Հայտատուի ընտանիքի անդամների անձնագրերի բնօրինակներն ու պատճենները
*Այն է՝

ա) Ծննդյան վկայականը և պատճենը, որը հաստատում է ազգակցական կապը դիմումատուի ընտանիքի անդամի հետ, ում հետ վերջինս պատրաստվում է ճանապարհորդել կամ ով հոգալու է վերջինիս ճամփորդության կացության ծախսերը, եթե դրա անհրաժեշտությունը կա:

բ) Ամուսնության վկայականը և պատճենը, որը հաստատում է ազգակցական կապը դիմումատուի ընտանիքի անդամի հետ, ում հետ վերջինս պատրաստվում է ճանապարհորդել կամ ով հոգալու է վերջինիս ճամփորդության կացության ծախսերը, եթե դրա անհրաժեշտությունը կա:

գ) Կենսաթոշակի վկայականը և պատճենը: դ) Մահվան վկայականը և պատճենը (դիմումատուի ընտանիքի անդամի մահվան վկայականը) (եթե առկա է):

☐ **Օտարերկրյա քաղաքացիների դեպքում՝ ՀՀ-ում օրինական բնակության իրավունքի ապացույց, որը վավեր կլինի ԵՄ անդամ պետությունից նախատեսվող վերադարձի օրվանից ևս երեք ամիս**

☐ Առանց ծնողների կամ մեկ ծնողի հետ ճամփորդող անչափահասի դեպքում՝

Ծննդյան վկայականը և պատճենը;
Ծնողների ամուսնության վկայականը և պատճենը;

Ծնողի կամ օրինական խնամակալի համաձայնություն միայն այն դեպքում, եթե անչափահասը ճամփորդում է մենակ կամ մեկ ծնողի ուղեկցությամբ: (Համաձայնության մեջ պետք է նշված լինի, թե ում հետ է ճամփորդում անչափահասը: Անչափահասին ուղեկցող անձը պետք է ներկայացնի իր անձնագրի պատճենը, մուտքի արտոնագրի պատճենը, օդանավի տոմսի և հյուրանոցի ամրագրումը):

Ծնողի կողմից տրված լիազորագիրը պետք է լինի առավելագույնը մեկ ամիս վաղեմության: Այն պետք է թարգմանված լինի անգլերեն կամ իտալերեն՝ նոտարական հաստատումով:
Անգամ եթե երեխային ուղեկցելու համար լիազորվել է երրորդ անձը, միևնույն է անչափահասի դիմում-հայտը պետք է ստորագրվի նույն օրը երկու ծնողների կողմից Վիզայի դիմում-հայտերի կենտրոնում ԹիԷլԷսկոնտակտի աշխատակցի ներկայությամբ:

Ուշադի՛ր: Եթե ծնողներից մեկը երկրում չէ, ապա նա պետք է այցելի իր բնակության երկրում գտնվող Իտալիայի դեսպանատուն և լիազորագիր տրամադրի մյուս ծնողին:

Այնուհետև այդ համաձայնագրի պատճենը պետք է ուղարկի մյուս ծնողին, որպեսզի վերջինս կարողանա դիմել իրենց երեխայի վիզայի համար: Կամ այդ ծնողի կողմից տրված համաձայնագիրը պետք է իր բնակության երկրում հաստատվի ապոստիլով և փաստաթղթի պատճենն ուղարկվի Հայաստան: